

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

### ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից  
23 նոյեմբերի 1999 թվականի

#### Հոդված 1. ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Սույն օրենքը կարգավորում է բույսերի սորտերի և կենդանիների ցեղերի սելեկցիոն նվաճումների ստեղծման, իրավական պահպանության ու օգտագործման հետ կապված գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները:

#### Հոդված 3. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

ա) բույսի սորտ՝ միևնույն բուսաբանական տաքսոնի շրջանակներում հայտնի դասերի ստորադաս բույսերի խումբ, որը կարող է որոշվել տվյալ գենոտիպը կամ գենոտիպերի համակցությունը բնորոշող հատկանիշներով, նույն բուսաբանական տաքսոնի այլ խմբի բույսերից տարբերվում է առնվազն մեկ հատկանիշով և կարող է եզակի համարվել իր պիտանիության տեսանկյունից՝ սորտի ամբողջական անփոփոխ բույսեր ստանալու համար: Սորտը կարող է ներկայացվել բույսի մեկ մասով կամ մի քանի մասերով, այն պայմանով, որ այդ մասը կամ մասերը կարող են օգտագործվել սորտի ամբողջական բույսերի վերարտադրության համար: Սորտի պահպանվող կատեգորիաներն են՝ կլոնը, առաջին սերնդի հիբրիդը, պոպուլյացիան, սելեկցիոն գիծը:

բ) սելեկցիոն նվաճում՝

բուսաբուծությունում՝ արհեստական ճանապարհով կամ բնորոշյալ միջոցով ստացված և գոյություն ունեցող բույսերի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը:

- անասնաբուծությունում՝ մարդու կողմից ստեղծված և ծննդաբանական կառուցվածքով ու դա նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու և կենդանիների մեկ ցեղի ձևով բազմանալու համար քանակապես բավարար

հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը.

գ) սերմնանյութ (տնկանյութ)՝ սորտի վերարտադրության նպատակով օգտագործվող բույս կամ դրա առանձին մաս.

դ) բուսանյութ՝ սորտի վերարտադրությունից բացի այլ նպատակով օգտագործվող բույս կամ դրա մաս.

դ՝) կենդանու ցեղ՝ կենդանիների խումբ, որն օժտված է գենետիկորեն պայմանավորված կենսաբանական և կազմաբանական հատկություններով և հատկանիշներով, որոնցից մեկը կամ մի քանիսը յուրահատուկ են տվյալ խմբի համար ու դրանցով տարբերվում են այլ խմբի կենդանիներից: Ցեղը ներկայացվում է արական և իգական սեռի կենդանիներով կամ տոհմանյութով: Ցեղի պահպանվող կատեգորիաներն են տիպը և գիծը.

դ՝) տոհմանյութ՝ տոհմային կենդանի, դրա սեռական բջիջները, սաղմերը.

դ՝) տոհմային կենդանի՝ ցեղի վերարտադրության համար նախատեսված կենդանի.

ե) պահպանվող սելեկցիոն նվաճում՝ բույսի սորտ կամ կենդանու ցեղ, որը գրանցվել է պահպանվող սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում (այսուհետ՝ պետական գրանցամատյան).

զ) հանրահայտ սորտ և ցեղ՝ ճշգրիտ նկարագրություն ունեցող, պետական գրանցամատյանում գրանցում ստացած սելեկցիոն նվաճում.

է) հայտատու՝ սելեկցիոն նվաճման արտոնագիր ստանալու համար հայտ ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

ը) հեղինակ՝ ֆիզիկական անձ կամ ֆիզիկական անձանց խումբ, որի ստեղծագործական աշխատանքով ստեղծվել են սորտը և ցեղը.

թ) սելեկցիոներ՝ սորտի և ցեղի հեղինակը, նրա ժառանգորդները, անձինք, որոնք սորտի և ցեղի հեղինակի գործատուն և նրանց իրավահաջորդներն են.

ժ) լիազորված մարմին՝ սելեկցիոն նվաճման արտոնագրումն իրականացնող պետական լիազորված մարմին.

ժա) բողոքարկման խորհուրդ՝ լիազորված մարմնի ստեղծած հանձնաժողով, որը լուծում է սելեկցիոն նվաճումների փորձաքննության հետ կապված վիճելի հարցերը:

(3-րդ հոդվածը լրաց, խմբ., փոփ. 04.11.03 ՀՕ-29-Ն)

#### **Հոդված 4. ՄԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Սելեկցիոն նվաճման իրավունքը պահպանվում է օրենքով և հաստատագրվում է սելեկցիոն նվաճման արտոնագրով: Սելեկցիոն նվաճման արտոնագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Արտոնագիրը հաստատում է արտոնագրատիրոջ՝ սելեկցիոն նվաճումն օգտագործելու բացառիկ իրավունքը:

3. Արտոնագիր ստացած սելեկցիոն նվաճումը գրանցվում է պետական գրանցամատյանում:

4. Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է 20 տարի՝ սելեկցիոն նվաճումը պետական գրանցամատյանում գրանցելու օրվանից սկսած: Խաղողի, պտղատու, դեկորատիվ և անտառային ծառատեսակների սորտերի ու դրանց պատվաստակալների արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է 25, իսկ կենդանիների ցեղերի համար՝ 30 տարի:

4. Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է 30 տարի:

## **Հոդված 5. ՄԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Սելեկցիոն նվաճման իրավական պահպանության չափանիշներն են՝

1) նորությունը.

~~Սորտը և ցեղը համարվում է նոր, եթե մինչև արտոնագրման հայտ ներկայացնելու օրը տվյալ սորտի սերմնանյութը (տնկանյութը) կամ ցեղի տոհմանյութը սելեկցիոններն այլ անձանց չի վաճառել կամ այլ կերպ չի փոխանցել սորտը և ցեղն օգտագործելու նպատակով՝~~

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում արտոնագրման հայտը ներկայացնելու օրվանից ավելի վաղ, քան 1 տարի առաջ,

բ) այլ պետության տարածքում արտոնագրման հայտը ներկայացնելու օրվանից ավելի վաղ, քան չորս տարի առաջ, ~~իսկ խաղողի, պտղատու, դեկորատիվ ու անտառային ծառատեսակների համար՝ ավելի վաղ, քան վեց տարի առաջ.~~

2) տարբերիչ առանձնահատկությունը.

Սելեկցիոն նվաճումը համարվում է տարբերիչ առանձնահատկություն ունեցող, եթե արտոնագրման հայտը ներկայացնելու պահին հստակ տարբերվում է հանրահայտ սելեկցիոն նվաճումից.

3) միատարրությունը.

Սելեկցիոն նվաճումը համարվում է միատարր, եթե հաշվի առնելով նրա բազմացման առանձնահատկությունները՝ այդ ~~սորտի բույսերը և~~ ցեղի կենդանիները բավականաչափ միատարր են իրենց հիմնական հատկանիշներով.

4) կայունությունը.

Սելեկցիոն նվաճումը համարվում է կայուն, եթե նրա հիմնական հատկանիշները բազմակի վերարտադրությունից կամ վերարտադրության առանձնահատուկ ցիկլի դեպքում՝ ամեն մի այդպիսի ցիկլի վերջում, մնում են անփոփոխ:

## **Հողված 7. ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

1. Սելեկցիոն նվաճումը պետք է ունենա անվանում, որում պետք է ընդգրկվի **սորսի** ծագումնաբանությունը:

2. Անվանումը պետք է թույլ տա նույնականացնել **սորսը** և **ցեղը**, բացառի միայն թվային արտահայտությունը, տարակուսանք չառաջացնի **սորսի** և **ցեղի** որակական և ծագումնաբանական հարցերում:

3. Լիազորված մարմինն **սորսի** և **ցեղի** անվանումն առաջարկում է սելեկցիոները: Եթե հայտնաբերվում է, որ այդ անվանումը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ կետի պահանջներին, ապա վերոհիշյալ մարմինը մերժում է գրանցումն ու պահանջում է, որ սելեկցիոները մեկ ամսվա ընթացքում առաջարկի ուրիշ անվանում: **Սորսի** և **ցեղի** անվանումը գրանցում է լիազորված մարմինը՝ միաժամանակ տալով արտոնագիր:

4. Երրորդ անձանց կողմից նախկինում ձեռք բերված իրավունքները չեն քննարկվում:

5. Սելեկցիոն նվաճումն օգտագործվում է միայն պետական գրանցամատյանում գրանցված անվանմամբ:

## **Հողված 11. ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՄԱՆ ՏԱՐԲԵՐԻՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ, ՄԻԱՏԱՐՐՈՒԹՅԱՆ և ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ**

1. Սելեկցիոն նվաճման տարբերիչ առանձնահատկության, միատարրության և կայունության փորձարկումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում: Հայտատուն անհրաժեշտ քանակությամբ **սերմանյութ** և **տոռմանյութ** է տրամադրում փորձարկման համար:

2. Որպես փորձարկման արդյունք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության հետ համապատասխան պայմանագիր կնքած օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների, լիազորված մարմնի հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների, ինչպես նաև հայտատուի տրամադրած տվյալները:

3. Սելեկցիոն նվաճման տարբերիչ առանձնահատկության, միատարրության և կայունության փորձարկումները կարող են համատեղվել դրա տնտեսական օգտակարության նպատակով կատարվող պետական փորձարկումների հետ:

4. Լիազորված մարմինը սելեկցիոն նվաճման պաշտպանունակության չափանիշների փորձաքննության դրական արդյունքների հիման վրա կայացնում է որոշում՝ արտոնագիր տալու մասին և կազմում է սելեկցիոն նվաճման նկարագրությունը:

5. Արտոնագիր տալը մերժելու մասին փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, դա ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում, հայտատուն իրավունք ունի կրկնական փորձաքննության խնդրանքով դիմել

լիազորված մարմին: Կրկնական փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Կրկնական փորձաքննությունից հետո լիազորված մարմինը կայացնում է որոշում՝ արտոնագիր տալու կամ արտոնագիր տալը մերժելու մասին:

7. Կրկնական փորձաքննությունից հետո արտոնագիր տալը մերժելու մասին որոշմանը չհամաձայնելու դեպքում, դա ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում, հայտատուն իրավունք ունի բողոք ներկայացնել լիազորված մարմնի բողոքարկման խորհուրդ: Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է դա ստանալու օրվանից երկու ամսվա ընթացքում: Լիազորված մարմինը որոշման մասին հայտատուին հայտնում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 7.1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում:

8. Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

### **Հոդված 13. ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

1. Արտոնագրատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց արգելել առանց թույլտվության օգտագործելու արտոնագրով պահպանվող սելեկցիոն նվաճումը, ինչպես նաև օգտագործելու դա իր հայեցողությամբ, եթե դա չի խախտում այլ արտոնագրատերերի իրավունքները: Յուրաքանչյուր անձ արտոնագրատիրոջից կարող է լիցենզային պայմանագրով ստանալ թույլտվություն՝ սելեկցիոն նվաճման նկատմամբ հետևյալ գործողություններն իրականացնելու համար.

ա) արտադրություն և վերարտադրություն.

բ) ~~հետագա բազմացման նպատակով սերմանյութի ցանքային պիտանիության հասցնում.~~

գ) վաճառքի առաջարկություն.

դ) վաճառք կամ այլ եղանակներով իրացում.

ե) Հայաստանի Հանրապետությունից արտահանում.

զ) Հայաստանի Հանրապետություն ներմուծում.

է) նշված նպատակներով պահեստավորում:

2. Արտոնագրատիրոջ իրավունքը տարածվում է նաև այն բուսանյութի վրա, որն արտադրվել ու շրջանառության մեջ է մտցվել առանց իր թույլտվության:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ է ստանալ արտոնագրատիրոջ թույլտվությունը նաև այն ~~սորտի սերմերի~~ և ~~ցեղի տոհմանյութի~~ համար, որոնք՝

ա) էապես ժառանգում են պահպանվող էլակետային ~~սորտի~~ և ~~ցեղի~~ հատկանիշները, եթե այդ պահպանվող ~~սորտը~~ և ~~ցեղն~~ այլ սելեկցիոն նվաճումների հատկանիշներն էապես ժառանգող սելեկցիոն նվաճում չէ.

բ) ակնհայտորեն չեն տարբերվում պահպանվող սարքի և ցեղից.

գ) պահանջում են պահպանվող սարքի և ցեղի բազմակի օգտագործում:

4. Պահպանվող (ելակետային) սելեկցիոն նվաճման հատկանիշներից էապես ժառանգող սելեկցիոն նվաճում է համարվում այն սելեկցիոն նվաճումը, որը ելակետայինից ակնհայտ տարբերության դեպքում՝

ա) ժառանգում է ելակետային սելեկցիոն նվաճման կամ էական հատկանիշները ժառանգած այլ սելեկցիոն նվաճման առավել էական հատկանիշները՝ պահպանելով ելակետային սելեկցիոն նվաճման գենոտիպը կամ գենոտիպերի համակցությունն արտահայտող (բնորոշ) հիմնական հատկանիշները.

բ) համապատասխանում է ելակետային սելեկցիոն նվաճման գենոտիպին կամ գենոտիպերի համակցությանը, բացառությամբ այն շեղումների, որոնք առաջացել են այնպիսի մեթոդների կիրառության հետևանքով, ինչպիսիք են ելակետային սարքի և ցեղից մակաձված ձևափոխության (մուտանտի) կամ սումակլոնային տարբերակի ընտրությունը, հետադարձ տրամախաչումը, գենային ինժեներիան:

#### **Հոդված 15. ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՉԽԱՄՏՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արտոնագրատիրոջ սելեկցիոն նվաճման իրավունքի խախտում չի համարվում, եթե արտոնագրված սելեկցիոն նվաճումն օգտագործվում է՝

ա) անձնական և ոչ առևտրային նպատակներով.

բ) փորձարարական նպատակներով.

գ) որպես ելանյութ՝ նոր սարքի և ցեղերի ստացման համար:

#### **Հոդված 18. ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

1. Սելեկցիոն նվաճման իրավական պահպանությունը վաղաժամկետ դադարեցվում է, եթե՝

ա) լիազորված մարմինը որոշում է կայացրել արտոնագիր տալը մերժելու մասին.

բ) հայտատուն հետ է կանչել հայտը, կամ արտոնագրատերը գրավոր ձևով հրաժարվել է արտոնագրից.

գ) եթե պարզվել է, որ իրավական պահպանությունը տրվել է՝

գա) անձի, որն այդ իրավունքը չունի.

գբ) գլխավորապես սելեկցիոնների ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, և «տարբերիչ առանձնահատկություն», «միատարրություն» և «կայունություն» չափանիշները չեն կատարվել իրավական պահպանությունը տալու պահին.

դ) *(կեսն ուժը կորցրել է 28.09.16 ՀՕ-145-Ն)*

ե) ~~ստորի~~ *ցեղի* անվանումը չեղյալ է համարվել իրավական պահպանություն ստանալուց հետո, իսկ հայտատուն կամ արտոնագրատերը չի առաջարկել համապատասխան անվանում:

2. Սելեկցիոն նվաճման իրավունքի պահպանությունը չի կարող վաղաժամկետ դադարեցվել սույն օրենքում սահմանված պատճառներից տարբերվող այլ պատճառներով:

*(18-րդ հոդվածը փոփ. 28.09.16 ՀՕ-145-Ն)*